

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՆՈՐԻՆ Ս. ԾԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս 1949 նոյեմբեր 2-ին օդային ճամբով մեկնեցաւ Ամման, ընկերակցութեամբ Աղեքսանդրիոյ Առաջնորդական Փոխանորդ Հոգեշնորհ Պսակ Վարդապետի, հոնկե մինչև Երուսաղեմ, անձամբ նախագահելու համար Երուսաղեմի Պատրիարք Հոգելույս Տեր Կիւրեղ Բ. Արքեպիսկոպոսի թաղման թափորին և ապա Երուսաղեմի մեջ՝ թաղմանական կարգին։

Վեհափառ Գարեգին Կաթողիկոսի ինքնաբուխ այս ժեստը անգամ մը ևս կուգար ապացուցանելու թե Ազգերու միջև ստեղծված է խոր և գնահատելի միասնականութիւն մը, զոր ավելիով և դրապես կուգար հաստատել Վեհ. Գարեգին Կաթողիկոսի Ամման մեկնումեն մեկ օր վերջ հասած Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գեորգ Զ.ի 1949 նոյեմբեր 1 թվակիր հեռագիրը անգլիերեն լեզվով։

Գարեգին Կաթողիկոսը, հակառակ 80-ամյա ծերութեան, ո՛չ միայն Անթիլիասեն Ամերիկյան հիվանդանոց քանիցս այցելութեան գնաց հանգուցյալ Պատրիարքին, ո՛չ միայն անձամբ նախագահեց Անթիլիասի Ս. Լուսավորիչ Մայր Տաճարի մեջ կատարված թաղմանական կարգին և կատարեց վերջին օծումը Հանգուցելուն, ապա նաև օդի ճամբով մինչև Ամման և հոնկե ցամաքի գծով մինչև Երուսաղեմ գնաց ու անձամբ նախագահեց թաղմանական թափորին և կարգին, որու ընթացքին քարոզեց և հոգևորապես մխիթարեց ազավոր և գաղթական հայ ժողովուրդն ու որբացած միաբանությունը և միանգամայն Տեղապահի ու նոր և արժեքավոր Պատրիարքի մը ընտրության համար ներկայացուց իր և իր ազակից միաբանության բարեմաղթությունները։

Վեհափառ Հայրապետը տասը օր Երուսաղեմ կմնա և առիթը կունենա այցելելու Երուսաղեմի փոխարքա Ռաֆ Նաշաշիբի Փաշայի և հայ գաղթականներու, անոնց համար հայցելով Աստուծո գթառատ ողորմությունն ու խաղաղությունը։

Սրբազան Հայրապետի Երուսաղեմ գտնըված օրերուն կզուգադիպի Գյուտ Խաչի տոնախմբությունը, որ մեծ շուքով կկատարվի Ս. Հարության տաճարին կից՝ հայոց Ս. Լուսավորիչ տաճարին մեջ, որմե տասնյակ աստիճաններ վարը կգտնվի Գյուտ Խաչի խակաև վայրը, ուր Ս. Հեղինե թագուհին գրտավ Քրիստոսի Ս. Խաչը։

Նորին Սրբությունը հայրապետական զգեստավորությամբ կնախագահե օրվան մեծաշուք թափորին Ս. Հարության տաճարի մեջ, Քրիստոսի գերեզմանի շուրջը։

Վեհափառ Հայրապետը 1949 նոյեմբեր 11-ին կանցնի Ամման, ընկերակցությամբ նորընտիր Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Եղիշե Վարդապետ Տերտերյանի, Միաբանական Ընդհանուր Ժողովի Ատենապետ Հոգեշնորհ Տ. Սերովբե Վարդապետ Մանուկյանի, Աղեքսանդրիոյ Առաջնորդական Փոխանորդ Հոգեշնորհ Տ. Պսակ Վարդապետ Թումայանի և Հայֆայի հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Հարություն Վարդապետ Մուշյանի։

(«Հասկ», պաշտոնաթերթ Կիլիկիո կաթողիկոսության)